# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաթնաղբյուր, (0249) 731 42, katnaghbyur.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 19

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը.

2. ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի սեփականություն հանդիսացող 02-057-0108-0857 կադաստրային ծածկագիրը կրող 2.2701 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության տրամադրելու վերաբերյալ.

3. ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի սեփականություն հանդիսացող 02-057-0108-0856 կադաստրային ծածկագիրը կրող 7.0 հա գյուղատնտեսական նշանակության հողամասում երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման համար համաձայնություն տալու վերաբերյալ.

4. ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուրի համայնքապետարանի 2006-2012 թվականների արխիվային փաստաթղթերը Թալինի տարածքային արխիվին տրամադրելու վերաբերյալ.

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՂՈՒԿԱՍ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ԺԻՐԱՅՐ
4. ՏՈՆՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաթնաղբյուր, (0249) 731 42, katnaghbyur.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 20

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 48-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաքարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, համայնքային սեփականություն հանդիսացող 2.2701 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-057-0108-0857) հողամասը (գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության վարելահող - 0.93456 հա, արոտավայր -1.33554 հա), մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրվող հողամասի տարեկան մեկնարկային վարձավճարը սահմանել կադաստրային զուտ եկամտի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, նախավճարի չափը սահմանել մեկնարկային վարձավճարի 5 (հինգ) տոկոսի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՂՈՒԿԱՍ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ԺԻՐԱՅՐ
4. ՏՈՆՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաթնաղբյուր, (0249) 73142, katnaghbyur.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 21

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 48-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով ՀայաստանիՀանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տրամադրել համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, համայնքային սեփականություն հանդիսացող 7.0 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-057-0108-0856) հողամասը (գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության վարելահող - 4.81973 հա,արոտավայր - 2.18027 հա) <<ԱՎ-ՍԹՈՆԵ>> ՍՊԸ-ին երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով տրամադրելուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրվող հողամասի տարեկան վարձավճարը սահմանել կադաստրային զուտ եկամտի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՂՈՒԿԱՍ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ԺԻՐԱՅՐ
4. ՏՈՆՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաթնաղբյուր, (0249) 731 42, katnaghbyur.aragatsotn@ mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 201 8թվականի N 22

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2006-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՐԽԻՎԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ ենթակետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուրի համայնքապետարանի 2006 - 2012 թվականների արխիվային փաստաթղթերը Թալինի տարածքային արխիվին տրամադրելու՝ հետագա պահպանության համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՂՈՒԿԱՍ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ԺԻՐԱՅՐ
4. ՏՈՆՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ